

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՅԱԶԱՏ

Հ Ո Ղ Ա Շ Ե Ն



ԵՐԵՎԱՆ

1929

891.99

27965.

11-19

Պայմանագր. Կ.

Հոսանքներ:


# Հ Ո Ղ Ա Շ Ե Ն

Հետու յեր Հողաշենը: Բլուրների ու արտերի կողերով կեռաման ճամբեքն եյին ձգվում:

Հողաշենում այնքան գետնափոր խրճիթներ չկային, վորքան աթարի բուրգեր ու պղնձագույն չորացած խոտերի դեզեր: Կավե կճուճներ կային, քուջուջ անող հավերի պես, պատերի տակ ու կտուրներին տափակ: Մնձրեն ու սելավը մաշել, չեչտացրել եյին Հողաշենի քարերը և նեղ ճամբեքը: Ու վոչ մի ձեռք մի քար դեռ չէր շարժել Հողաշենի ձորերում:

Յերբ արևը կելներ՝ Հողաշենի խրճիթները փոքրիկ, թոնիրների ծխով կլցվեյին ու ծուխը կտուրներից տափակ կմերվեր յերկնքում: Սառայենց խրճիթի դուռը կբացվեր, դուրս կգար նրա յեղբայրը, Թոմասն ու արտը կերթար: Հետո հարսը կարմիր մի կով նախրին կխառներ ու յերկու փոքրիկ կխսամերկ մանուկներ բոքոնի կտորտանքները կկրծեյին, իսկ Սառան յերկանք կպատցներ ապուրի կորկոտն աղալու համար:


Հողաշենի տավարածը յերբ նախիրը գյուղ կքշեր՝ իննը կով Թունիյենց գոմը կերթային:

Տավարածը գալիս եր Սառայենց տուն—գանգատվում եր.

— Թունիյենց կովերը հարու յեն տալիս ձեր Ջեյրանին:

Հողաշենում չէր քայլ տափակ կալեր կային:

Թոմասն արտը կտրում չկարողով խաղացող մանուկ-



5859

ները հարցնում եյին Սառային, Թուռնիյինց կալերի կողմը նայելով.

— Ինչու նրանք ցորենի դեղեր ունեն շատ ու ծիրանի խալաթ են հագնում:

Հետո նրանցից մեկն իր շալե շապկի մաշված ծլանքները քաշում եր մերկ ծնկներին, աչքը գցելով մյուսի հողազույն արխալուղի մեծ-մեծ կարկատաններին:

Բերքառատ եյին Հողաշենի դաշտերը և գյուղերը մոտիկ: Հողաշենում մի փոքրիկ ջրաղաց կար, փրփուր ջրերը ճերմակ՝ նրա փթած և մամուտ թևերն եյին դարձնում, իսկ տափակ կարի վրա դողում եյին պառավ ուռնուռ մոխրագույն ճղները բարակ: Զրաղացի ներսը հողաշենցիք պապական քարերով իրենց աղուռն եյին աղում:

Շրջանի միակ ջրաղացում աշխատում եր բաւրակ Մարութը: Նա բարակ բեխեր ուներ ու շրթների վրա՝ ժպիտ:

Մի որ, յերը Մարութը Թոմայինց դարին եր աղում, Սառան բաղարջ եր տարել նրան: Հետո Մարութը դնացել եր շուրը կապելու ու ջրաղացից քիչ հեռու տեսել եր Սառային վտանները վանալիս: Մարութը տեսել եր Սառայի սիրուն ծնկները ձյունե: Նրա յերակները կծկվել եյին. ջրաղացի կարի վրա կախված, քամու դեմ դողացող ուռնուռ բարակ ճղների պես: Գողի նման թալուռն ինչ-վոր բան առաջին անգամ շարժվել եր նրա ներսը ու հարցրել եր մի քիչ ամաչելով.

— Սիրուն Սառն, դուն իմ կնիկը կլինես: Սառան ամաչել եր, հետո անցել դետակի վրա

կախված անկող կամուրջից և կածանով բարձրացել դեպի դյուզ: Նա հացենու նման հասակ էր քաշում ու արևածողի պես ժպտում էր խոնարհ: Սառան Մարութի աղացած գարու դուլինն ունիւր իր կլոր ծնկներին ու սիրուն դեմքին:

Յորենագուշն ալյուրոտ դեմքով բատրակ Մարութը սիրել էր սիրուն Սառային:

Թունին ատլասի արխալուզ էր հագնում ու հասած արեխնի: Սառային աղբյուրի մոտ հանդիպելիս նա միշտ խոստանում էր շատ բան.

— Սառա, մեր տունը հարս արի, մեր ամբարները ցորենով լիքն են, յես քեզ համար լավ շորեր կառնեմ ու ելի հուլունքներ:

Են որը, յերբ Թունին տուն գնաց, արխալուզն ատանց հանելու պակեց, հետո նորից անհանգիստ դուրս յելավ քուչին:

Ճանապարհին ձեռքի ճիպոտը խաղացնելով՝ հոնքերը թոփ արած քայլում էր Թունին: Նա գնում էր Դուկենց տուն:

Գյուղխորհրդի նախագահ Սաաքելը, մեկ էլ կուսբլիլի քարտուղար Բարսեղը խոսելով գնում էյին, ձեռքերում ինչ-վոր թղթեր բռնած. իսկ մեկը հողաշենցոց «կանցիլարը» ժողովի յեր կանչում:

Դուկենց գոմում յերկուսը յերկար խոսեցին, նա իր սրտի գաղտնիքը նորից բացեց.

— Հորս Զաղացը խել էն. գեղում խոսալու իրավունք չունենք: Դուկ, ես դիժը մեր գեղականի սարքած գործն ա: Զարխը պիտի մեր թարավը շուտ տանք: Համա լավ գիտեցիր, վոր սրանց մանգիլը կարճ ա:

Ղուկն աչքերը տրեխներին եր գցել:

— Ղուկ, իմ սրտի դարդն են աս, վոր Սառային առնեմ, են չախն ել ո՞վ կկարենա իմ չոփին դիպչել.— կնիկս կուսակցական ե:

— Թու՛նի, պիտի մի բան սուտ մոգոնենք Մարութի վրա, վոր գեղականի առաջ խայտառակ ըլի: Են չախը հեշտ կլի Սառայի գործը:

Հետո նրանք գնացին «կանցիլարը» ժողովի:

Այն իրիկուն հողաշենցիք ու մոտիկ գյուղացիք հավաքվել եյին «կանցիլարի» դռանն ու նստոտել չեչոտ քարերի վրա: Յեկել եյին յերկար մահակներով ու կարկատած՝ արտերի նման շալե չուխեքով:

Հողաշենի գյուղխորհրդի նախագահը միջահասակ մարդ եր, խոսում եր ուսի մեկն առաջ թեքած, բըռունցքն ողի մեջ շարժելով ու միշտ կրկնում եր.— ուրեմն, անշուշտ: Կարմիր ծածկոցով սեղանի մյուս կողքին նստած եր կուսքջիջի քարտուղար Բարսեղը, նա թավ բեխեր ուներ ու բարձր հասակ. քաղաքում բանվոր եր յեղել, բայց Կենտկոմի վորոշմամբ գյուղ եր յեկել: Սեղանի մյուս ծայրին ժողովին քարտուղարում եր Սառան: Խոսում եր «հնգեր» Առաքելը:

— Ուրեմն վաղուց աս, վոր մենք ուզում ենք ջրբաղացը նորոգել. Ջրաղացն ել, խոմ գիտաք, կուլակ Թոսունինն եր, վորը խեղճ խալխին գուփում եր ու ջրոփում: Անշուշտ, հնգերնեք, ամեն ինչ խո միանգամից չի ըլի: Ուրեմն, անշուշտ, ես տարի վերջնականապես գործը պիտի գլուխ բերենք: Ջրաղացը պիտի ավելի մեծացնենք ու անշուշտ նոր ձևով կառուցենք: Հիմի ուրեմն դրա համար պիտի փող հավաքինք: Ուրիշ ելի շատ բաներ ասաց:

Ծերերն սկսեցին առակներով խոսել ու «բիրադի

սուտ բան ե՞ս ասին, իսկ ջահելները պնդում եյին, վոր անհրաժեշտ ե: Առաջարկներ յեղան շատ, գարի ու ցորեն խոստացան, վոր քաղաք տանեն շինարարական նյութեր առնելու:

— Հնգերներ, ուրեմն ես ժողովը պիտի մի հոգի ել ընտրի, վոր ղարկենք քաղաք կուրսերում սովորելու: Եղ ջրաղացը պիտի մաշինեքով բանի, անշուշտ դրա համար հարկավոր ե գործին ծանոթ լինել:

Ժողովը Մարութի թեկնածու թյունը դրեց ու հետո Սառան արձանագրության աջ սյունակում գրեց.

— Ուղարկել Մարութին:

Ժողովի վերջին ծայրում նստել եր Թունին ու ճիպտան եր խաղացնում: Նա վոչ մի գյուղական ժողով բաց չեր թողնում, գալիս եր ու միշտ ել խոսում: Ես անգամ ել ձայն խնդրեց, կոկորդը մաքրելով:

— Հը', հը', ես դիփը լավ բան ե, վոր մեր շըրջանի միակ պատիկ ջրաղացը կարգի ա գցվում. համա մեր գեղի հասարակը չքավոր ա, ուժերը ներում չի շինարարական ծախսերը հոգալու. իմ խելքում են ա պառկում, վոր առժամանակ պիտի յետաձգենք...

— Ուրեմն դրա համար մենք ունենք վարկային հնգերություն. շրջանի կողմից դիմել ենք վաղուց, անշուշտ մեղ ոգնության կգան, բանի վոր մոտիկ շրջանում ջրաղաց չկա ու ջուրն ել քիչ ա: Ուրեմն հարկավոր ա գործը կազմակերպված տանել:

— Ա՛յ, հասարակ, յես ձեր ոգտին եմ ասում, վոր մեր ուժերից վեր ա. գիտուն խոսքն ասում ե, թե՛ «վտաքդ վերմակիդ բոյ ձգի»...

— Մեր վերմակը խորհրդային իշխանությունն ե, վտաքներս ձգելու տեղ ունենք, հալա մի բան ել ափելի. են ել քեզ ենք բախշում գերեզմանիդ համար.—



նստած տեղից վեր կենալով, ձեռքերը գյուղացոց կողմը պարզած, խոսեց Աքրիբադեհնց Գողտը:

Իսկ Ղուկը նստած տեղը կարծես յեփվում եր թոնրի վրա դրած կաթսայի նման:

— Ա՛յ, հասարակ, ընդհատիլ միք, յես խոսում եմ զակոնով,— ձայնն ավելի բարձրացրեց նա,— կազեթներում ինչ-վոր գրված է, յես են եմ ասում: Չակոնն ասում է, թե՛ չարիտի թաղան շինենք, պիտի հնովը յուր գնանք, վոր հիմի կուլակ չկա. եղ սուտ բան ա, միջի մարդիկ են թշնամություն սարքում:

— Տո՛ւ, շնչ, ձենդ կտրի. մենք եղ թավուր զակոն չենք ձանանչում.— վերջում՝ ել՝ կուլակի տղա:

— Ձեր ասելով իմ հերը կուլակ է, իմ ի՛նչ բանն է, յես բաժան եմ նրանից ու համակրում եմ կուլակիցությանը:

Ժողովը խառնվել եր իրար:

Նախադահը մատիտը սեղանին եր խփում անվերջ.

— Հնգերներ, ժողովը վերջացել ա վոչ:

Կուսքշիքի քարտուղարի բեխերից ժպիտ եր կախվել, լսում եր հանգիստ, յերբ վերջում խոսեց, բոլորը լռեցին:

Յեվ այն գիշեր Հողաշենի ու հարևան գյուղերի խավար խրճիթներում քանի-քանի զանգերի մեջ խրմորի պես ուղեղներ «լեկարապցը» յերազեցին: Իսկ թունրիցնց ողայում յերկու մզլած ուղեղ ինչ-վոր ծըրազըներ եյին կաղմում:

Մտանն ճամբու յեր գցում Մարութին: Գյուղի ծայրին նրանք խոսում եյին յերկուսով: Տղայի ուսի

խուրջինի մեջ մի քանի գաթա կար: Սառան եր թխել նրա ճամբու պաշարը:

— Սառան, քաղաքից վոր գամ, քեղ համար ինչ բերեմ:

Սառան, թե՛

— Կով-լաչ գրքեր:

Պուրջինով տղան քայլում եր արտերի կողերով, իսկ կարմիր ու կանաչ խշխշան շորերով աղջիկը նայում եր յետևից և քամին շոյում եր նրա յերկար ծամերն ու փեշերը:

Յնա դառնալիս Սառան անցավ ջրաղացի մոտով, ներսում քարերն ել չեյին պատվում և նրա կոտրաված թևերը չորացել ու ճաքճքել էյին արևի տակ: Ամայի յեր գարձել Հողաշենի փոքրիկ ջրաղացը և ներսն առնետներն էյին պարում:

Սառան, Մարութը քաղաքից կգա ու նորից կաշխատի եզտեղ, բայց ջրաղացն այնքան կփոխվի:

Աշուն իջավ, նախշուն աշուն: Արևի ջերմությունը թուլացավ ու սառը քամին սուրաց դաշտերի վրա: Պոտերը քովեցին իրար և ստառացին մեղմ շշուկով: Քամին խաղաց, արտերում թափթփված ցորենի վուկեղույն տուտղերը հավաքեց իրար, քշեց հեռև-հեռև: Ճորենով բարձած վերջին սայլերի անխններն ել խորտուբորտ ճամբեքում ճոճացին:

Հողաշենցիք ելեկտրաղացի աշխատանքն սկսեցին:

Թունին ու Ղուկը մեկ-մեկ գնում էյին ձորը և անցնում կառուցվող ելեկտրաղացի մոտով: Պոսում էյին, պտոշները կախած: Թունին միշտ մտածում եր, թե՛ ճես ում ջրաղացի վրա յեն գուռնա փշում, ինքը

խո մեռած չի, վոր հոր կարողութիւնը խել են»: Իսկ Ղուկը նախատում եր իր հորը. «Ինչի՞ եսքան հարըստութիւն թոփ արեց, վոր հիմի պատիվ չունի, իրեն ել կուլակի տղա յեն ասում»:

— Կազիթներից երևում ե, վոր սրանց մանգիլը կարճ ե:

— Յանի ռվ ա իմանում.— ու Ղուկը պատմում եր մի առակ: Հետո մոտենում եյին՝ ձորի պուռնկին, մահակի վրա ծոված գյուղացուն:

— Բարև Ալեք ամուն:

— Ա՛յ, բարև ջահելներին:

Ալեք ամին գետի ճերմակ փրփուրի պես միրուքն եր շփում, չիբուխը փստացնելով.

— Ես լավ բան են շինում, համա ջրովի բոտանս խարաբ ելավ. ձմեռվա տղմի բիբարս պակսելու յե: Մեր ջուրը քիչ ա, շրջանը բերքառատ ու ջրաղաց չկա: Չէ, լավ նպատակ ե:

Վարը նոր շենքի հիմքերը բարձրանում եյին այնպես ամուր ու հաստ: Ինչքան ցեմենտի տակառներ ու շինարարական նյութեր կային ձորում թափված:

Քաղաքից մարդիկ եյին յեկել. նրանցից մեկն իր գլխարկի վրա կակարդ ունեւր ու շարունակ շրջելով ինչ-վոր բաներ եր ասում.

Գյուղխորհրդի նախագահը և կուսըջիջի քարտուղարը խոսում եյին ժպտալով:

— Տղերք, ես մի շարքն ել քաշենք մինչի իրիկուն:

Աշխատանքին ոգնում եյին գյուղի կոմսոմոլներն ու պիոներներն ել: Նրանք կատակներ եյին անում.

— Մարութը կգա պոսփիսոր դառած:

— Ձե, շլապկին կակարդ ել կունենա կպցրած:

— Հերիք ա, տղերք, քար, կիր հասցրեք:

Ու այսպես կառուցում եյին ելեկտրադացը, աշխատում անընդհատ, անընդհատ, անընդհատ:

Թուռնին անհանդիստ քայլում եր ողայի մի ծայրից մյուսը: Ղուկը խոսում եր որորվելով.

— Նրան ձեռքներիցս չպիտի բաց թողանք, շուտ համողվող, ոգտակար ու լավ մարդ ե:

— Մինչի նրա գալը, անի, նստի, են մի բանը վերջացնենք:

Նրանք նստեցին ու Ղուկը պրչի ծայրով սպիտակ թղթի վրա սև ու ծուռտիկ գրեր թափեց.

«Մենք, ներքո ստորագրյալներս, միջակ տնտեսության տեր աշխատավոր գյուղացու վորդիք ենք: Բաժանվելով մեր հերերից, ցանկություն ենք հայտնում մանեւ մեր գյուղի կոլտնտեսության մեջ: Մենք սոցիալիզմի կառուցվելուն կողմնակից ենք և միևնույն ժամանակ համակրում ենք կուսակցությանը, բայց մեզ վրա ուշք դարձնող չկա:

Մնդրում ենք՝ անուշադրության մատենք վոչ:

Ստորագրեցին: Մի քանի անգամ կարդացին, հետո Ղուկը ծնկին դրած, խնամքով ծալեց, դրեց ծոցը, վոր ուղարկի կենտրոն:

Թուռնին հորը ներս կանչեց.

— Ա՛յ, ամի, աշխարհի բանը խո գիտես, վոր մեզ մարդամեջ չեն խառնում: Իրա համար նշնվում եմ ու կնիկս պիտի կոմսուռնիստ ըլի, վոր իմ գործը հեշտանա: Հենց հմի գնա Թոմայենց տուն, խոսք պտտցրու Մառայի մասին: Մոստացի, ինչքան կարաս, եզուցվանից

ել յես կքաղվեմ մեր մարազը, հարցնողին ել կասես՝  
 թե թուռնիից բաժան եմ ապրում:

Դուկենց բատրակի ծակ տրեխներն անվատահո-  
 րեն կոխ տվին դռան շեմքին:

— Համեցե՞ք, համեցե՞ք, հնգեր Համբարձում.—  
 կանչեց թուռնին:

— «Մրանց մի բանը պակաս ա»,— մտածեց Հա-  
 մոն:

Նրանք յերկար խոսեցին:

Համոն յնոստուն տարի Դուկենց հանդերում  
 տրեխ եր մաշել ու իր տերերի հետ խաթրով վարվել  
 զխտեր:

— Գիտես, Համո, Մարութից նամակ ա յեկել,  
 քաղաքում մի ուսւ մաթուշկի հետ պակավել է:

— «Իմ ինչ գործն ա, դրա համար եք կանչել  
 ինձ ըստեղ, յես խո ձեզ պես անգործ չեմ, եզուց  
 մութ ու լուսին եմ հանդ գնալու»,— անխոս մտածում  
 էր նա, բայց գլխով նրանց ասածներին հավանության  
 նշան տալիս:

Խոսեցին ախնքան, համոզեցին, վոր Համոն գնա  
 ու բոլորը պատմի գյուղացոց, թե ես թավուր բան եմ  
 լսել, հետն ել՝—անխր, թուռնին ու Դուկին անմիաս, գի-  
 տուն մարդիկ են, ես կառավարության մանզլիլը կարճ  
 ա, հմի պիտի մի քիչ ել նրանց լսել ու ելի ուրիշ բաներ:

Են գիշեր թուռնիյննց ողայում յերեք ձեռք իրար  
 միացան:

Ճանապարհին Համոն զգում էր, վոր լավ բան չի  
 անում, տատանվում էր քամու դեմ որորվող սիմինդի,  
 տերևի պես, բայց նրանց խոստացած ենքան փողը ցո-  
 րենի շեղի նման կիտվում էր նրա աչքերի առաջ:

Նամակի

«Միքադ ու կարոսով Մանային:

Ստաա՛, յես քսեղ սպարում եմ կտ. բութում,  
 տուսով կվերջացնեմ ու գեղ կգամ: Կարոսեղ եմ  
 քեզ: Իրի՛ր՝ քազա ի՞նչ խաբարներ կան, Լեկերա-  
 դացը յե՞րբ եմ վերջացնեղաւ: Մեր կամտուով տեղեր  
 վա՞նչ եմ: Հա՛, յես քրթակցում եմ կազերին: Իսկ  
 եղ քրթակցի՛ մեր գեղի լավ ու վաս կողմերը գրի:  
 Քեզ համար լավ-լավ գրե՛ր եմ առել:

Հմի տապում եմ, մե՛տ Լի կգրեմ...»

ՔՈ՛Ւ ՄԱՐՈՒԹ

Թունիի հայրը մի քանի անգամ գնաց Մանայինց  
 հետո վերջնական պատասխան բերեց.

«Կուլակին տալու քիչ չունեմ. ձեր խոստում-  
 ներն ինձ հարկավոր չեն. իմ վեսացուն Մարութն աւ  
 Սուտ ա, թե նա քաղաքում պահելի է մի ուրա մա-  
 թուշի հետ. գեղականի խառնած գործն աք:—Ասել եր  
 Թուման:

Հայրը խոստացել եր շատ ըսն, բայց վոչինչ չեր  
 ոգնել: Նա տուն եր վերադառնում, յերբ գոմի դռան  
 առջև ընկած գերանի վրա նստած սպասում եր Թու-  
 նին:

— Ի՞նչ ասեց:

Հարցրեց Թունին:

— Ատում ե...

Հայրը լսեց:

— Բան դուրս յեկավ վոչ:

— Վոչ:

— Ըտե՛նց ել իմանում ելի:

Լուռ ելին: Հետո ել՝

— Վրնց թե, ինձանից լավ աղի յե տալու:  
Թունին վոտքի կանգնեց. Ղդայնուլթյունից ձեռ-  
քի բարակ ճիպոտը կոտրեց: Թունին Ղուկենց տուն  
գնաց:

Թունիի յետևից բեխերի տակ անլսելի կերպով  
ինչ-վոր բան փնթփնթաց Թոսուն ամին, հորթի կը-  
տըրված թոկը կապելով:

Գարուն եր, պայծառ գարուն: Թավիշ կանաչի  
մի շղարշ եր փովել դաշտերի վրա: Խոնավ հողն արևի  
առատ ջերմությունն եր զգում: Սարերի դոշերին փրո-  
ված ցելած արտերից գաղճ գոլորշիներ եյին բարձրա-  
նում: Կոունկները վերադառնում եյին յերամ-յերամ,  
լայն թևերը բաց արած՝ կապույտ, պարզ ու խոթ՝ յիր-  
կընքի և արևի տակ: Գլխիկոր ծառերը ժպտում եյին  
մարմանդ արևի դեմ ու առաջին տերևն ել տառում  
եր իրիկնային հովի հետ: Արևի տակ աճեց ամեն  
ինչ ու պարարտ սևահողերում ցորենն ել առաջին ծիլն  
արձակեց: Գարնանը ծիծեռնակի պես գյուղ լեկավ  
բատրակ Մարութը:

Համոն շուտ-շուտ գնում եր Թունիյենց գոմը,  
բայց շարունակ ինչ-վոր մի բան զգում եր: Կարծես  
մեկը խոսում եր նրա ներսը. «Համո, ընդոնցից հեռու  
կաց»: «Համո, խաբվես վոչ»: Նա գիտեր, վոր լավ  
բան չի անում:

— Յես մեր գեղի լեկտրադացը կրակ տամ... չե,  
եդ մեկը յես անողը չեմ: Եզուց ես ա բանեցնելու յեն.  
Մարութն ել հրես յեկել ե: Իմացվի վոր ե, ինձ Սիբիր  
կքշեն... կապանեն... կնիկս... բեխեքս...

Իսկ Համոյի գնալուց հետո, Թունին ու Ղուկը

նայում եյին պատի պատուհանանման փոքրիկ անցքից  
 ելեկտրադացի կողմը:

— Թու՛նի, հմի թամաշա արա, թե՛ լեկտրադացի  
 բոցը վոնց պիտի գելը լիսավորի:

Թու՛նին տխուր հր շարունակ:

Համոյի աչքերի առաջ ինչքան ել կիտվում եր  
 նրանց խոտացած փողը, յերազում եր, վոր կինը նոր  
 դեյրա կունենա, բայց վոչ մի տեղ բերանը չեր բաց  
 անում, թե՛ ասրանց մանդիլը կարճ ան:

Նա իրենց գոմը մտնելիս խոսեց ինքն իրեն.

— Համո՛, անխր, դուն անշառ մարդ ես, ինչի՞ ձեռք  
 տվեցիր նրանց: Ըսենց են ելի մարդ խաբում:

Հետո շուրջն եր նայում:

— Մարդ խո չիմացամ:

Ու փափախը գետնով եր զարկում:

— Գնա՛, Համո՛, մեղքդ կանցիլարում խոստո-  
 վանվիր. մի հողի ունես տալու, թող դժոխքի վայ  
 չդառնա:

Յերբ գյուղի լույսերը մարել եյին ու շներն եյին  
 վոռնում՝ դնչերը գունատ լուսնին տնկած, մեկը թա-  
 կում եր գյուղխորհրդի նախագահի տան դուռը:

Հետևյալ որը կուսքջիջի քարտուղար Բարսեղն  
 արտակարգ ժողովը բացեց:

Համոն կարմիր ծածկոցով սեղանի մոտ կանգնած  
 պատմում եր, վոր ինքը մեղք չունի, իրեն խաբում  
 եյին... Նա ձեռքին բռնած ունեի Թու՛նիի ու Ղուկի  
 տված «սպիչկեն», վորով այրելու յեր «լեկտրադացը»:  
 Թու՛նիի ու Ղուկի դիմումը գնացել եր կենտրոն և  
 գրություն եր յեկեկ հողաշենցոց:



ժողովը հուզվել էր: Գյուղացոց մահակները ճոճվում էյին ողում: Խոսեց և Ս. քրիբազենց Պողոսը.

— Հնգերտինք, յես առաջարկում եմ, մ'ը կողմանից կենարոն դարկենք հնգեր Բարսեղին, Առաքելին, մեկ էլ Համոյին եղ խնդիրն ընս յեղ պարզելու համար:

Հողաշենցոց ժողովը դեռ շա՛ր աշնակվում էր:

Մարութը Սառայի համար գրքեր էր քերել շատ ու անուշ հոտով սալպոնս:

— Սառն, յերեսդ ես սապոնով լվա, ավելի կսիրունանաս:

Են որը Հողաշենում տոնական հանդես էր: Մարութը պիտի բանեցնեք «Լեկտրադացը»: Ահել ու Ղահել ձորն. էյին իջել թամաշի: Յեկել էյին կենարոնից ու գյուղերից մտաիկ: «Լեկտրադացի» թիթեղե կառուրն ու պատերը զարդարված էյին նախշուն ծաղիկներով. Լենինի նկարը ժպտում էր դաան վերևը:

— Նպատակ կա, վոր մեկել տարի սրա կողքին մի պատիկ լեկտրական էլ շինենք շրջանի համար.— ասել էր Առաքելը, կենարոնից յեկած մի ընկերով:

Ցորենն ազվում էր բարակ փոշու պես, գյուղացիք մոտենում էյին, ձեռները խրում ալյուրի մեջ, յերկու մատով վերցնում, շփում լեզվի ծայրով, խմոր դարձնում ու տրորում էյին զարմացած:

— Ըսկի թե՛ի ել չկա. աջիդ դուրբան սավետ,  
վոր մեր գեղին ել ես աչք պահում:

Համոն ուրախ եր. մարում խոսում եր ինքն ի-  
րեն. «Հլա սրա հրաշքին մտիկ ե՛, յես ինչի՞ պիտի  
կրակ տայի՞... Ու կարծես ամաչում եր մի բանից:

Մն որը Հողաշենում առաջին անգամ ելեկարա-  
կան ուժը շրջանի բերքն աղաց:

Մի որ ել Սառան գնաց թիթեղածածկ կառուրով  
եկեկարաղացը: Մարութը չարխերի յեանից դուրս յե-  
լավ, բազուկները վեր քաշած: Մարութը ժպտալով  
ներս կանչեց ու հանկարծ ձեռքը փաթաթեց նրա փա-  
փուկ վզովը:

— Թող արա, Մարութ:

— Չե, Սառա, մի քիչ:

— Հետո կգամ:

— Մառա, յե՞րբ պսակվենք:

— Շուտով: Թող արա:

Իուրը նորից բացվեց ու կաքավի պես թռավ  
Սառան: Մարութն անշարժ կանգնել եր դողալով ու  
պտտվող չարխերի մեջ Սառան յերեաց: Նա գեռ գզում  
եր նրա փափուկ կրծքի թովքը, շունչը և շորերի հո-  
տը: Նա գլուխը կախեց, գետնի վրա տեսավ անուշ  
հոտով սապոնի թուղթը, վորի վրա նկարված եր գե-  
ղեցիկ աղջկա գլուխ: Մի բոպե շփոթվեց, հետո ինչ-վոր  
բան հիշեց ու գետնից բարձրացրեց:

Սառան կաքավի պես թռավ նրա ամուր կռներէց  
 ու գռնավոր փափուկ փետուրի նման՝ սապոնի թուզ-  
 թը թողեց:

Մարութը պտտցրեց ելեկտրադացի չարխերը, վոր  
 Հողաշենի շրջանի առատ բերքն աղա: Հետո մշուշոտ  
 յերազի նման հիշեց Թոսուն ամուց խլած պապական  
 ջրադացը, հերվա—ուռին, Սառային՝ վոտքերը լվա-  
 նալիս, յերկանք պտտցնելիս Թունիի թթված դեմ-  
 քը... ժպտաց:

— Տոկի մեջ ուժ կա շատ, գեղին կարևոր:

43ԱՆՔԸ ՅԵԼՆՈՒՄ Ե ՊԱՅՔԱՐՈՎ

15859

Սոնան իր գնած գունավոր չիֆի հետ տարավ ու Սերոյի սերը:

Սերոն չիֆ տալու վախտը ժպտալով ասել եր.

— Սոնա, հարսանիքի շորեր Թս կարելու:

Ջահել եր Սոնան, ուներ յերկնագույն խոր աչքեր, վոսկեթել ծամերը թափվել էյին փափուկ ուսերին: Սիրուն եր Սոնան, յերբ Սերոն աչքի կողքով նայում եր նրան: Սերոյի դեմքը մի քիչ կարմրում եր հանդերում բուսած կակաչի նման ու ներքին դողացող շրթունքը սղմում եր ատամների տակը: Սոնան իրենց գյուղի հատակ դաշտերի պարզությունն ուներ:


— Սիրուն ես, Սոնա, մի բան ասեմ, նեղանաս վոչ:

— Ասա, — ասել եր Սոնան:

— Նշանվելու եմ, ուզում եմ քեզ առնել. — ասել եր Սերոն ու համբուրել եր Սոնայի նոսն պես կարմիր թուշը, հետո ծոցից հանել եր զինվորական շորերով նկարն ու ավել եր Սոնային:

Սոնան հասած աղջիկ եր, տասնութը գարուն ծաղկի պես բացվել եր նա: Սոնան ել ուզում եր Սերոյի նման ամուսին ունենալ:

Յերբ Սերոն Գարմիր բանակից վերադարձել եր գյուղ, նա ուներ իր զինվորական շորերը, վորոնցից դեռ գալիս եր մի ինչ-վոր ուրիշ հանել հոտ, վորը նման չեր գյուղի կույտ շորերի հոտին: Սոնան սիրել եր այդ հոտը. հոտի հետ սիրել եր նաև ուսում առած Սերոյին:



Գյուղում շատ բան փոխվեց աֆս ուրից, յերբ  
Սեբոն կարմիր բանակից վերադարձաւ:

Սեբոյի խորթ մայրը, խնձորի խորշոմած կաշու  
գեմքով մի կին էր: Նրա բարակ կնձռտափած ճակատի  
տակ վառվում էյին խաղողի ճիւղված հատիկների նման  
մի դույզ ջրալի նեղ աչքերը, վորոնցից մեկը նայում  
էր մյուսի հակառակ ուղղութեամբ: Գյուղում նա  
հայտնի էր վորպէս մարդ ծնծող, կովարար, հետովախ  
բռնող, աղոթող ու շողամարդ կնիկ: Նա ամեն տեղ  
ամենքի հետ խոսում էր պարզ, առանց ամաչելու:  
Քեպես նրա անուշը Փամբուզ էր, բայց գյուղացիներ  
ը Յարամազ ամականն էյին կպցրել:

Գյուղի կանայք բամբասում էյին, թե Յարամա-  
զը Չարչոնց Գողորի հետ կենակցում է, բայց նա  
ինքն իրեն պատասխանում էր.

— Հողս ընգոնց գլուխը, իրենց թնչ գործն ա,  
թե յես ինչ եմ շինում:

Չարչոնց Գողորը յերկու քսանից անց տարիքով,  
կյոք գնդի նման մի մարդ էր, վորի ուսերի վրա նըս-  
տել էր մարմնի նման, բայց համեմատաբար ավելի  
փոքր գլուխը: Նրա վերին շրթունքի յերկու կող-  
մից բեխերը շրվեծների նման թափվում էյին ծնո-  
տին: Յուզոտ ոճիքով շալե կաբկատած չուխան կոյոր  
ուսերի վրա իր փայլուն տեսքն ունէր: Բլխին բազ-  
մել էր դառան ցեցոտված կոնաձև փափախը: Գուրս  
ցցված կուրծքը շարունակ խոխոտում էր, տարբեր ձայ-  
ներ հանելով շնչատութեան հետ մխասին: Թվում էր,  
թե կենդանի կատու յի կուլ տվել ու նա ներսից  
մոտում է:

Նա հաճախ նստում էր արևկող պատի տակ ու

ծույլ-ծույլ քաշում եր տերվոդորմիայի հասիկները; բեխերի տակ մրթմրթալով—ախեր, շառ, ես մինն ել աստձձ: Հիշում եր իրա խանութը, մուշաարիներին, գյուղացիներին չիթ, նավթ և հազար ու մի մանրունք վաճառելիս. հիշում եր արշինի կուտրած ծայրը, թեթև կշեռքը, խունացած դավթաքը. «Չարչու գործը դե՛ րսենց ա ելի, ինչ պիտի անես»: ասում եր ինքն իրեն:

Հետո աշխարհը դառավ, տակը՝ վրա յեղավ, նրա կարողութունն ել ձեռքից գնաց: Յերբ բարձրացնում եր աչքերն արևիոզ պատի տակից, տեսնում եր կոռպերատիվի ցուցանակը տուֆքար շենքի ճակատին: Նա գնում եր Տեր-Չաքարի հետ խոսելու ու մի-մի թաս արաղ անուշ անելու: Ինչ, Տեր-Չաքարն ել սըրտակից մարդ եր ու վաղուցվան ախպեր տղա: Նըստում եչին սաքուլում խիբի վրա: Իոդորն իր կուրծքը խոխոացնելով հարցնում եր.

— Տեր հայր, դու զրից բանիմաց մարդ ես: Եփեմվերդին ինչ ան ասում. լսելով, մեք գեղի քոնցուների ոխտիցը գալու յն. դժբիտ:

— Հն, բն, զրված ա.—ողու ըստակը շուրթերից հեռացնելով, քթի կեղտոտ խորշերը լայն բացարած՝ հավաքում եր աչքերի անկյունների մոտ, մագաղաթանման դեմքի միանները կծկելով:

Տեր-Չաքարը նման եր իրենց տան անկյունից կախված Հիսուսի խունացած նկարին. նույնիսկ մի անգամ, գյուղացու մի յերեխա հարցրել եր նրան.

— Են քո կարաիշկենն ան:

— Ձե, մատաղ քեզ, սա Հիսուս-Քրիստոսն ա, յերեսդ խաչ հանի, վոր զորանաս:

— Քրիստոսը վճրն ա:

— Մա մեր Լենինն ան.—ասել եր Տեր-Չաքարը:

— Բա խի նման չի, մե թավուր ան, հեչ լավը չի, Սերոյի շանց տված Հենիւնը լամն ա:

Իսկ Տեր-Չաքարը հայհոյել եր Սերոյին:

Գոգորն ու Տեր-Չաքարն իրար մխիթարական խոսքեր կասելին, մինչև վոր կռադարկելին ողու շիջը: Հետո Գոգորն իր կուրծքը խոխուացնելով կերթար տուն, անհամբեր կսպասեր, մինչև վոր Յարամազը դուռն իր յետևից ամուր փակելով ներս մտներ:

Հոււմբաթը, Սերոյի խորթ յեղբայրը, կուպիտ յերիտասարդ եր. ուսերի ծայրերն ականջներին մոտեցրած, մկան կոծած հացի նման, մեծ քիթը թթված ու ազվամազ յերեսի վրա կախել եր մոռութին:

-- Ե՛, Է, փուչ աշխարհ, հլա ըստեղ թամաշա արա, գեղը մեր փսնքոտ Սերոյի ձեռքին ան: Ինձ՝ ել ասում ան, արի ժողովների մասնակցի, կոմսոմոլ գրվի՛. ասում ա, արի, հալբաթ ինքը մի շահ կուռնենան, թե չե գուր տեղն ինչի՞ յե բերան ցավացնում. լավ, ասենք թե գրվեցի, վոր սովածանամ, հաց ու ջուր կտան: Միթամ ինքը վոր գրվել ան, ի՞նչ ա շահ արել: Ասում են, վոր շուտով ելի կռիվ կլի, իրան ելի սալդաթ կտանեն: Միթամ դրանց ուսումն ինչի՞ն ա պետք գալու:

Չոր խսիրի վրա պառկած եր Հոււմբաթը. թվում եր նրա շորերն եյին ընկած հատակին՝ դեղին արխալուղը, ծունկը կարկատած շալվարը, ծակ տրեխները, իսկ ուսերի մոտ վոչխարի նման պառկած եր փափախը:

Տան ճեղքված պատերի վրա դարսված եյին փթած գերանները, ուր սարդերն իրենց ծաղկաձև վոստայններն եյին հինել:

Աչքերը փթած գերաններին հառած՝ մտածում եր Հոււմբաթը.

— Մերս ընչի՞ր յե Չարչոնց Գոգոորի տունը գնում...

Հումբաթը կողքի դառնալով՝ վողնաշարը ճքճքացրեց և սրտին այնքան մոտ զգաց կնոջ թովչանքը։ Նրա թթված դեմքի վրա մի թեթև ժպիտ սահեց, սարգերի վոստայնների մեջ յերևաց Սոնայի դեղեցիկ դեմքը։ Ոտը հոգոց հանեց.

— Վճրտեղ ես, Սոնա... ինչ լավ կլի, մերս ինձ համար ուզի. ինձ ինչ, թե Մերոն ա սիրում. սիրտս երվում ամ նրա համար։ Ձե, պտի Չարչոնց Գոգոորի աչքին լավ յերևալ. իրա աղջիկը չի, ապրանք ա, ում ուզենա, կտա։ Համա Մերոն կոսոմոլ ե... դե մերս ել իմ կողմը կլի, հալալ տղեն յես եմ։ Չոփուռ Հումբաթ, դնա ու քեֆ քաշի, հարուստի փեսա յես դառնալու, գեղում քեզ մատով շանց պտի տան, դուն ել սրանից հետո նստիր. ու կեր, հարստությանդ վերջ չի ըլի։ Յանի քեզ ել հիվ կարա ասել չոփուռ Հումբաթ, բա ել հիմ են ասելու Չարչոնց փեսա Համբարձում ադա։ Բախտս բանելու ան, թե վոր յես քացով չտամ։ Հմի թող Մերոն աչքերը պլշտրած նայի, թե Սոնան ունն ա ըլելու։

Մտքերը վորոճում եր Հումբաթը, մինչև վոր իրիկվա խավարը յերդիկի ծակից ներս իջավ ու նստեց տան անկյուններում։ Յերբ փակվեցին Հումբաթի աչքերը, նա խանդով քուն մտավ։

Ճրագի դեղին լույսը պսպղում եր յերկուսի աչքերի նման։

Մյն գիշեր, ամեն որվա պես, ճրագի կողքին դարսած Սոնայի անկազմ գրքերի յերկար ստվերի տակ շուտ-շուտ պատից կախված դառնը նայելով խոսում եյին յերկուսը։



— Ախր, Փամբուզ, չես գիտնւմ, թե եւ ջոնցոյ զառն իմ պլխին ինչ ոյիններ խտաղաց. դուքանս խից կոպեռնատուն դարձրեց, հերիք չի, հլա աղջկանս ել խելքից հանել ա, պճիճ ա, ինչ զահրուժար ա դարձրել ու ինքն ել քաղքցու դայդի սիլիքիլի յե անուժ: Իմ տունը քանդողը քոնցոյ Սերոնն ա, թե վոր դուն ուզում ես, ինձ հետ ապրել, ետոր-եզուց իմ կնիկն ես դառնալու, յես դարուլ չեմ, վոր Սերոնն իմ տղեն ճաշվիլի. նա վոր իմանա՝ ես թափուր բան կա, մեր գործը խարաբ կանի: Պետք ա նա մեջ տեղից վերացվի, վոր ամեն բան իր կարգովը գնա: Բացի դրանից, նրա մտ թու փող կա կոպեռնատունից, ուզում եմ, վոր եզ փողը... պիզաս ելի, ել ինչ ասեմ... Պետք ա դուքանս ելի իմ ձեռքը դցեմ. ընենց անենք, վոր չուշանա, խոսքն ասում ա, թե «յերկաթը տար-տար են ձեռում»: Փամբուզ, քանի թեկ ա, պաի Սերոյին վերացնենք. դրանից հետո կնատենք ու միշտ մեր մահը կոպեռնատունի փողը կմարսենք: Զու՛նքի շան վորդիքն ինձնից կերել են:

— Ա՛խր...

— Ե՛լ ախա ու վախս վորն ա, Փամբուզ շան, թե վոր ուզում ես մեր սրտի ուզածը կատարվի՝ պաի անենք:

— Գողոր, ընենց բան ես ասում, վոր իմ ձեռքը վրա չի գնում:

— Զե, վրա գնալը կգնա, թե վոր դուն ինձ սիրում... — ու ձեռքը փաթաթեց Յարամազի վզովը:

— Բա չեմ սիրում...

Գողորն ուռած կուրծքը խոխոացնելով, ձեռքի փայտով հատակին ինչ-վոր անորոշ դժեր եր քաշում, իսկ Յարամազը մտածում եր, թե յերկուսից վորին զիջի: Բիչ հետո ճրագի: շույսը մեկը հանդցրեց ու մը-

Թուֆյան մեկ ինչ-վոր բան կատարվեց...

Չարչոնց Գոգորի տան դուռը նորից ճաաց ու կրունկի վրա բացվեց:

Յարամազը վորպես մի ուրվական, քայլում եր դեպի տուն:

Գոգորի կուրծքը Յարամազի դնալուց հետո նորից խախտաց:

— Հին սեփիմի վախան իմ մի կողմին մի կարաց ուտել, վոր հիմի դուք եք ձեռքիցս խլում: Իմ ասեղ ասնողից յես մախաթ կվերկայնեմ: Հալա մի քիչ յա-վաշ, քո խորթ մոր ու ախպոր ձեռքով եմ արունդ խմելու. կողեանատունի փողն ել աջ ջիբս ե գալու: Մի քեզ հարցնող ըլի, թե քանի՞ դուխ ունես ուտիդ վրա: Մովորել ա զեզի պատվական խալիխն կազիթ գցի, անպատիվ անի: Եսքան տարի մի ա ինձ համարձակվել ասելու, թե՛ աչքիդ վերևը սև ունք կա: Չե, գլխիս ճարը տենալու յեմ: Ձեռքիցս բաց թողամ վոչ, Են ա նա ել գիտում ե, թե՛ գծվում եմ իրա շիլ աչքի համար: Մեկը հլա հարցնող ըլի, թե քեզ մի ա սիրում, ինչի՞դ եմ կարոտ: Իմ ասողը թեքողը քո ա-նիծված ազան չի: Պախ վրեժս նրանից ատնեմ:

Չարչոնց Գոգորը տարիներ շարունակ գիտեր, թե ում հետ ինչպես պետք ե վարվել և քաղաքից յե-կող ամեն մի մարդու նա հայտնում եր իր վիշտը:

— Յես ես մեր նոր կառավարությանը պարզապես ասած շատ եմ հավանում, անաշինն իսկը Բրիտտոսի քարոզած զակոնն ունի, համա ես կողեանատունը, պնիճը, մեկ ել տուրքերը ժողովրդին շատ ա նեղում, հնգեր ջան, ըստանք վոր վերացվի, մնացած դիվին դաբուլ եմ:

Արևը տապ էր ու խանձող:

Փոքրիկ գյուղը թառել էր լեռան ստվերոտ կողին: Դաշտերից բարձրանում էր շոգը: Դեղին արտերում մեկ-մեկ փայլում էր առվակի նման հնձվորի սրածայր գերանդին: Գյուղի նախիրը հողնած վորոճում էր: Հումքաթն էլ վորոճող նախրի պես պառկել մեջքի վրա ու ատամների տակը խաղացնում էր չորացած մի խոտ: Շոգի նման մի միտք էր նեղում Հումքաթին. թվում էր գետնի կանաչի մեջ շարժվում էր նրա դեմքը. մեկ մոտենում էր իրեն, մեկ էլ հեռանում:

— Սինա...

Հումքաթն աչքերը մի քանի անգամ ճպճապացրեց: Հետո նրա աչքերին յերևացին դաշտերի վայրի ծաղիկները: Նա վեր յելավ տեղից, տեսավ, թե ինչպես արտերում աղջիկները ցորենի ու գարու խուրձեր էյին կապում:

— Ով իմանա, Սոնան էլ նրանց մեջ կլինի՞.— մտածեց նա ու կոացավ դաշտերի վերջին, դեղին ցողերով ծաղիկները քաղելու:

— Ես էլ նախրի հետ գեղը կտանեմ, Սոնային կտամ: Կուրախանա: Կմտածի, վոր իրեն շատ եմ սիրում. համա, տենաս, ինքն էլ ինձ պիտի սիրի, թե էլ՞ Սերոյին: Ե՛խ, Սոնա, ախր յես ընչով եմ պակաս Սերոյից, են մի վոր նա կոսոմոլ ա, յես չե՞: Սաոն, դուն էլ ես ինձ ասում, արի կոսոմոլ գրենք, համա դրանից ի՞նչ խեր,— ուզում չեմ: Չե, Հումքաթ, դու քո բանը լավ իմացիր. Սոնայի հերը կոսոմոլ չի սիրում:

Այսպես էր Հումքաթը:

Յերեկոյան նախիրը գյուղ բերելիս նա մի քանի փունջ ծաղիկներ էր հետը բերում. քաղել ու խրնամքով կապել էր Սոնայի համար:

Գյուղի աղբյուրի մոտ բոլոր կովերը հանձնեց տերերին: Բայց ծաղկեփնջերի տերը չեկավ տանելու: Հումքաթը վիզը ծռած, մերթ նայում եր հանգերից բերած փնջերին, մերթ Սոնայենց տան դռանը: Սոնան չեկավ, չերևաց:

Բայց Հումքաթը պիտի սպասեր:

Գիշերն իր թևերը փռեց գյուղի վրա:

Գյուղի կենտրոնում գտնվող մեծ տան կաննի-գից կախված եր կիտրոնի նմանվող ելեկտրական մի լամպ ու նրա լույսը, վերևում՝ քամու դեմ ալիքանման ֆոֆոացող կարմիր դրոշակի հետ կարծես կամենում եր ծավալվել փոքրիկ գյուղի վրա:

Բոլոր գյուղացիները հավաքվել էին այնտեղ:

Հումքաթը յերկար սպասեց: Սոնան չեկավ:

— Նրանց մեջ կլինի,— մտածեց Հումքաթը:

Նա ել ուղից առաջին անգամ ակումբի դռնից ներս մտնել Սոնայի համար, բայց թվաց, թե պիտի ծաղրեն իրեն. թվաց, թե Սերոն պիտի խանդի, իսկ Սոնան պիտի ասի դարմացած.

— Հումքաթ, ես վճիր քամին քշեց քեզ հստեղ:

Հումքաթին շատ բան եր անհասկանալի ակումբից: Նա յերկար ժամանակ աչքերը տրեխների սուր ծայրերին գցած, տատանվելուց հետո հուսահատ ու փշրված տուն գնաց:

Ինչ հետո գյուղացիները նստեցին կարգով շարված աթոռների վրա:

Ժողովի նախագահը Սերոն եր:

Իմացը կախված եր մի ճերմակ չարսավ:

Իռան մոտ նստած եր Սուքիասենց պառավը:

Նա աչքերը հռել եր մեծ չարսավին: Սուքիասենց պառավը ափսոսում եր ճերմակ չարսավի համար ու

նստած տեղը մտածում եր. «Ափսոս եղ յեքա կտորը, ինչի՞ յեն խարաբ անում, տենաա, ինչի՞ են քաշ արել. ջահել են, ընչեր ասես, վոր չեն մոզոնում. յերևում ւն, Սերոյի հունարը կլի... Բաղքիցը բերած կլեն, գեղում չի ճարվի, ինչ մեծ ել ւն, յերևիանցն ինչքան շատ շոր դուրս կդա դրանից»...»

Կենտրոնից յեկել եր գյուղի շեֆը. կաշվե պինջակով յերխտասարդ մի մարդ: Նա խոսում եր գյուղացիների սրտից: Լսում էյին փափախափոր ամինները, ճակատների կնճիռները լայն բաց արած: Թվում եր, այդ հողոտ մարդկանց լուռ ու մռայլ դեմքերին առաջին անգամ եր ժպիտն իջնում:

Սուքիասենց պատաճե ել ինչ-վոր մի բան լսեց, թե լխկ-լխկան խնոցու տեղակ ուրիշ մաշին են գեղ բերելու: Բայց լավ չիմացավ. նա շարունակ մտածում եր. «Ինչ մեծ կտոր ե, ինչ շատ շոր դուրս կդա...»: Ուղեց ինքն ել ձեռք բարձրացնել, ասել, թե՛ «Եղ ինչ թավուր մաշինա յե, վոր առանց խնոցու թան ու կարագ ե տալու»: Բայց նա չվերկացավ, եղքան խալխի մեջ վոնց կլեր ինքը վեր կենար խոսալու: Վերջը, յերբ Սոնային պիտի քաղաք ուղակեյին, իրենց գեղի ձենը սավետին տալու, նա իր չոր ձեռքը ուսից բարձրացրեց ճակատի դեմը:

Երբ ամեն ինչ վերջացավ ահուճում ու ճերմակ չարսավի վրա կատարվեցին հրաշքներ, գյուղացիները դեռ նստած էյին իրենց տեղերում: Նրանցից վոչ վոք չեր ուղում տուն գնալ:

— Հնգեր ջան, մեկ ել յեքը եք մեր գեղը դալու:

— Հնգեր ջան, թեզ-թեզ արի, ես դատն ու մեզ մոռանաք վոչ:

Գյուղացիներն ամենքը ցրվեցին իրենց տները,

ակումբից տանելով մի քաղցր հուշ Իսկ Սուքիասենց պառաֆի ել չեր մտածում ձերբակի չարսավի մասին. նա ուզում էր իմանալ, թե քանի լիտր կարագ կարժենա են խնացի—մաշինը:

Են գիշեր Չարչոնց Գոգորի գոմում հավաքվել էյին գյուղի զոտքերը՝ Գովլաթենց Թաղի Համբոն, Տեր-Ջաքարը, Չաղացպանենց Հարութը և ելի մի քանի ուրիշ կասկածելի մարդիկ, վորոնք շատ սակավ էյին յերևում գյուղում:

Յեցերը գոմի մի պուճախում նստած դավեր էյին լարում:

— Տղերք ջան, դնչաղ կացեր, վախենաք վոչ,— խոխոտւով խոսում էր Գոգորն ողու թասերը լցնելով,— աղամարդու պես գործը դուրս կքերեք... ես գիշեր ձեր հունարը շանց եք ա լու:

Գովլաթենց Թաղի Համբոն ողին կուլ տալով՝ մասները շիում էր բխներին: Նրա փայլուն կիզիբողի գլխարկի խոնացած մահուզի վրա դեռ մնացել էր ձվաձև հետքը ցարական կակարդի: Մութ դեմքերով մարդիկ էյին նրանք, վորոնց աչքերը նեղ ճակատների սակ նայում էյին ավելի խոր ու հեռից:

— Հմի թող ձեզանից յերկուսը գնան, Յարամազն ու Հումբաթը սպասում են...

Յարամազն արդեն յիրտորդ անգամ յերեսը խաչալինքելով հորանջեց. ծնկներին չոքած՝ գլուխը մոտեցրեց հատակին ու մրթմրթաց ժամադրքում գրված մի ինչ-վոր ազոթք, իրեն ել անհասկանալի:

Յարամազը վաղուց արդեն համոզել էր Հումբաթին: Հումբաթը յերկար ժամանակ չեր կարողանում աղատվել մաքերից, շուտ-շուտ դառնում էր չոր

կողերին, սիրտը վոսկրացած կրծքի տակ սկսում եր բարախել: Դրսի քամու նման մի սառը ջերմ եր անցնում նրա մարմնով: Ողայի ողը խեղդող եր ու ծանր: Նա բացի իր ականջների խշրոցից ուրիշ վոչինչ չեր լսում շրջապատի խոր լուսթյան մեջ: Թվում եր տան նեղ պատերը պահկել էյին կրծքին ու սիրտըն ավելի եր սեղմվում: Սոնավ առաստաղի գերանների մեկի արանքից կլոր ու մոխրագույն մի ճիճու ընկել եր ողայի մեջտեղը մեջքի վրա ու կարճ վոտներն ողի մեջ շարժելով ճգնում եր դառնալ փորին: Հումբաթն ել նման եր փոքրիկ ճիճվին, վոր մինչև աչքերի կոպերի ծանրանալն ու իրար մոտենալը չեր կարողանում հանգստանալ:

Նրանցից ամեն մեկը մյուսից գաղտնի մի նպատակ ուներ թագցրած իր սրտի մեջ: Յարամազն ամեն ինչ հոգուտ իրեն եր կարծում, իսկ Հումբաթն՝ ընդհակառակը:

Անհանգիստ եր Սոնան: Գուռը դժվար եր հաղթում նրան: Ինչ-վոր մի բան զգում եր, իրերը թվում էյին վոչ սովորական, կարծես ամեն բան փոխվել եր ու ինչ-վոր մի բան եր կատարվելու գյուղում:

Շուռը շղթան կտրելով հաչում եր:

Յերկու լուսնոտ ստվերներ անցան կտրի վրայով: Սոնան նկատեց: Աքլորն առաջին բերանը կանչում եր: Ապին չկար: Սոնան հազնվեց, դուրս յեկավ բակը: Գոմի ճեղքված պատի յետևից ինչ-վոր անորոշ շուկներ էյին գալիս: Սոնան մի շար բան գուշակելով բարձրացավ կտուրն ու լուսնի պես կլոր յերեսը մոտեցրեց լուսածակին: Ապին ներսն եր ու ելի մի քանի ուրիշ մարդիկ: Սոսում էյին ցածր, ողու

Թասերն իրար եյին շխկացնում, իսկ նրանց վերևը կախովել եյին ծխախոտի ծխի ամպերի նման թանձր քուլաները: Սոնան նրանց մեջ նկատեց մեկին, վորը շատ որեր առաջ հանդի ճամբին ուղեցել էր համարուրել իրեն, բայց համբուլրի տեղ Սոնան մի ապտակ էր տվել նրան: Կասկածոտ մարդ էր: Սոնան ուղեց ամեն ինչ լսել, բայց խոսում եյին շատ ցածր:

— Տղերք ջան, հետանաք վհչ, ընդոնք իրենցը կանեն, դուք ել ձեր գործին գնացեք: Ձեզանից մինը թող աչքը պահի, մեկելներդ ել կոպեռնատունի դուռը կոտրեք: Մաղաք ջան, կոպեռնատունի փողով եմ հարսանիքդ անելու, աղջիկս քեզ փեջքաշ եմ տալու, տերտերն ել ըստեղ ա, թող վկա ըլի: Այդ ժամանակ Տեր-Ջաքարը միրուքը շփելով նստած տեղից շարժվեց՝ իր ներկայութունը ցույց տալու համար: Ծուռ-վիզ Մաղաքի ապուշ աչքերն ողու թասի մեջ տեսան Սոնային. նա ել իր հերթին հիշեց հանդի ճամբին, ապտակը: Սոնան կտրի ծակից լսեց ապու խոսքերը, մարմինը սոսոաց, կծկվեց ու դեմքը գունատվեց. ուղեց ամուր ճչալ, աղաղակել, ոգնության կանչել, բայց զըսպեց իրեն ու վազեց Սարոյին ասելու:

Յարամազը վոտների թաթերի վրա, շի աչքը ճակատի տակ խաղացնելով մոտեցավ Հոււմբաթին ու արթնացրեց նրան: Հոււմբաթն առանց ցնցվելու մի յերկար հովվական դաշույն հանեց գլխի տակից: Յարամազը դռան փոքր բացվածքից մի պահ դուրս գնաց:

Ողայի խավար ու մռայլ Փոնի մեջ Հոււմբաթի խանդից վառվող աչքերի նման պսպղում էր ձեռքի սպիտակ դաշույնը: Իսկ խոր լուության մեջ լավում էր միայն Հոււմբաթի սրտի արագ բաբախումն ու Սերոյի



քնի շնչառությունը: Հումքաթը դողում եր ամբողջ մարմնով քամու դեմ Ֆոֆուացող փալաօի կտորի նման, Գոգորը կարծես կանգնել եր նրա ուսերի յետև և կուրծքը խոխուացնելով, փսփսում եր. «Աղջիկս քե եմ տալու»: «Բա հարստությունը, չէ, են ել խմ կլի»,—մտածում եր Հումքաթը: Իսկ թե մայրն ինչք յեր ուզում, վոր Սերոն մեջտեղից Վնջվի», այդ հարցին Հումքաթը չեր կարողանում պատասխան գտնել միայն մի բանի վրա յեր կասկածում—«Եհարստանանք հա»: Բիչ հետո դուռը նորից բացվեց ու Յարամազը թաթերի վրա ելի մտեցավ Հումքաթին:

— Սպասում են: Հետացանք:

Մայր ու վորդի մտեցան Սերոյին:

Սերոն քնի մեջ շարժվեց, գտնալով մեջքի վրա:

Մայրը շի աչքով նշան արեց և Հումքաթի դողացող ձեռքի յերկար դաշույնը ցցվեց Սերոյի կոկորդին: Յարամազը շղային մի շարժում գործելով աչքերը հեռացրեց, խնձորի կաշու նմանվող դեմքի մկանները ծալծլվեցին և ներքին շրթունքը սովորականից կախ ընկավ, բանալով դուրս ցցված յերկու կտորված առամները:

Սերոն ձեռքերը վեր պարզեց, ցանկացավ բարձրանալ, բայց յետևից յերկու շոր ձեռքեր նորից պակեցրին հատակին: Հումքաթը յերկրորդ անգամ դաշույնն ավելի ուժեղ քսեց Սերոյի կոկորդին: Սերոյի կիսաբաց աչքերը վախվեցին և նրա կոկորդից մի ճիչ արձակվեց.

— Հումքաթ, այդ գուն Թս...

Նրա կոկորդը խոխուաց և կրծքի ամեն մի բարձրանալիս արյունը թափվում ու սառում եր գետնին:

Մոնան վաղուժ եր գյուղի խճճված փողոցներով: Եները հաշուժ եյին նրա յետեից: Նա հասավ գյուղի վերին ծայրուժ դույզ բարդիների տակ տապարած հավի պես հյուղին: Բայց տան մտտ չափարի յետե թաղնված յերկու սավերավոր մարդիկ ուղեցան ամուր գրկել Մոնային: Մոնան ազատից նրանց չոր ու կոպիտ ձեռքերից և յերբ Սերոյենց տան դուռն ամուր խփելով պատին, նա բաց արից ու գնդակի պես ներս ընկավ... ապշեցին Յարամաղն ու Հումբաթը: Յերկուան ել թուլացած հենվեցին պատին:

— Սերո, — վսնց վոր կայծակի հարվածից ցնցվելով ճչաց Մոնան:

— Մոնան, յես... յէս... չէ... ապիդ, — կմկմաց Հումբաթը:

Յարամաղն աստծուն եր ողնության կանչում, իսկ Մոնան՝ գյուղին:

Գյուղի կոտպերատիվը թալանում եյին:

Փոքրիկ խրճիթներն արթնացան իրար յետեից ու գյուղը վատքի յելավ:

Յերբ Գոգորը գոմի դուռն իր յետեից կողպելով դուրս յելավ, նա սրորվելով ողայի դանից ներս մըտնելիս խախտաց:

— Ըսենց ա ելի միամիտ խալիքը, վոր կողմն ուզենամ, շուռ կտամ, մալադեց Գոգոր... ըստոնց դիվին պիտի մեկ-մեկ կոտորել:

Յերբ նա փոքր ինչ պատրաստվում եր հանգըստանալու, մինչև վոր կոտպերատիվի թալանը բերեյին, փոքրիկ պատուհանի ապակու տեղակ ձեթոտ ու պատրված թղթի արանքից տեսավ — գալիս եյին: Գոգորը դուռը բանալով, ձեռքը ծոծրակին շշնջաց:

— Գալիս եք, ձեզ մատաղ:

— Հնա, գալիս ենք, — խավարի միջից հնչեց զիւ  
առողջ ու ուժեղ մի ձայն:

Գալիս եր Սոնան, իր յետևից բերելով մի խումբ  
զինված գյուղացիներ: Յերբ նրանք մոտեցան, Գո-  
գորին թվաց, թե տունը պատվեց իր շուրջը: Նա հար-  
բած աչքերի հայացքը մի ուսի վերևից գցել եր պը-  
տըտվող հատակին:

Սոնան տոկուն կոմյերիտուհի յեր. նա իրենց  
սարերի պես համառ կամք ունեի...

Հետևյալ որը Յարամազը չկար:

Տեսնողներն ասում էին, վոր ավելի հեռու և  
խուլ գյուղերում շրջում եր, մութ մարդկանց բախտը  
գուշակելու:

Մոխրագույն լեռների հանգույցում ընկած գյու-  
ղի վերին ծայրում, զույգ բարդիների ստվերների  
տակ, պպզել եր սովորական մի հյուզ: Փոքրիկ դռնից  
կախված եր մի ժանգոտված կողպեք: Բարդիներն  
որորվում էին ամայի հյուզի վրա:

Իսկ գյուղում կյանքը յելնում եր պայքարով:



1927



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԿՈՒՆԵՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041649

ՀՐԱՍԱՆԻ ՊՐՈԼԵՏԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍԻ  
№ 7 Հ.Շ.Կ.Շ.Կ.Շ.Ն.Ս.Ն.Կ.Շ.Ի.Ն.

A  $\frac{I}{5859}$

Մեկ  
օրինակ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԳԵՈՐԳ ԳԻԻԳ  
ՄԱՐՏԻՆ  
Վ. ՍԻՄՈՆՅԱՆ  
Մ. ԳԱՐԲԻՆՅԱՆ  
ԲԱՆՂՈՐ ԱՄԻՐ

Բանասեղծություններ  
Պատմվածքներ  
Վերելքի  
Նոր  
Պատմվածքներ

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՄՆԵՆ

ՀԻՒ ՊՈՂՍՅԱՆ  
ԹՈՒԲ. ԱՂՍԹԱԲ  
Գ. ԽԱՂԱԲ

Բանասեղծություններ  
Լրիկա  
Կղկերիկ

5n.

~~ՊԻՆՏ 15 Ո.~~